ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

<<12>> դեկտեմբերի 2014 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ **Գյումրի համայնքի ղեկավար Ս.Մ.Բալասանյանը**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝ **Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը**

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝ **Գյումրի համայնքի ավագանու անդամներ՝**

Գ. Ադամյան Ա. Բաղեյան Ա. Բաղրամյան Լ.Բարսեղյան Ա.Գրիգորյան Վ.Եդիգարյան Գ.Թաթարյան Հ. Խաչատրյան Հ. Կարապետյան Տ.Հովհաննիսյան Վ. Հունանյան Ն. Մեսրոպյան Ռ.Մխիթարյան Է.Մկրտչյան Վ.Շիրինյան Ե.Պողոսյան Մ. Սահակյան Տ. Փանոսյան

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝ Համայնքի ղեկավարի տեղակալներ՝ Ռ.Սանոյանը և Վ. Մխիթարյանը, համայնքի ղեկավարի խորհրդականներ՝ Ա.Բալաբեկյանը, Վ.Սուքիասյանը, Ա.Մովսեսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանը, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կ.Մանասյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ Ա.Հակոբյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանը, ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի պետ Ս.Ղազարյանը, կրթության բաժնի պետ Հ.Սուլթանյանը, ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանը, համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի պետ Ա.Դավթյանը, վերահսկողության բաժնի պետ Ա.Համբարձումյանը, բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս.Մինասյանը, գովազդի բաժնի պետ Հ.Թադևոսյանը, իրավաբանական ապահովման բաժնի պետի ժ/պ Ա.Գրիգորյանը, քարտուղարության բաժնի պետ Ն.Բարսեղյանը, ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի բաժնի պետ Ա. Հովհաննիսյանը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման Գյումրու տարածքային բաժնի պետ Լուսինե Նահապետյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝

ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է)

ԼՍԵՑԻՆ.

1. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

Համայնքի ղեկավար Ս.Բալասանյանը ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 134-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի առևտրի սպասարկման և համակարգման ոլորտի բաժնի պետ Կ. Բադալանին:

Կ.Բադալյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2015 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի,
2. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 06-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2014 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N 134-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 134-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ՄԻՆԱՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս. Մինասյանին:

Ս.Մինասյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում համայնքի կողմից մատուցվող աղբահանության ծառայության դիմաց գանձվող տեղական վճարների 2015 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 06-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2014 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին>> N 134-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑԻ 4 –ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 24/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԼԻԱՆԱ ԵՐԵՄԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ 50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ՄԻՆԱՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս. Մինասյանին:

Ս.Մինասյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել արտոնություն Լիանա Երեմի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հաղթանակի 50 հասցեում գտնվող շենքի գույքահարկի տույժի գումարի վճարման նկատմամբ, ազատելով 185338 (մեկ հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր երեսունութ) դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Գյումրու տարածքային բաժնի պետ Լ. Նահապետյանին:

Լ.Նահապետյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրու քաղաքապետարանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնի աշխատավայրից դուրս ամուսնությունների պետական գրանցումների համար մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարը սահմանել 25.000 (քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ, ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ. Ղազարյանին:

Մ.Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2013 թվականի ընթացքում աշխարհի, եվրոպայի և Հայաստանի Հանրապետության առաջնություններում չեմպիոններ և մրցանակակիրներ պատրաստած գյումրեցի մարզիչներին շնորհել սպորտային պարգևներ 2.436.000 (երկու միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) «Սպորտային պարգևներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԹՎՈՎ 23 (ՔՍԱՆԵՐԵՔ) ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի կրթության բաժնի պետ Հ. Սուլթանյանին:

Հ.Սուլթանյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրու համայնքային ենթակայության թվով 23 (քսաներեք) նախադպրոցական ուսումնական հաստատություններին նվիրատվության կարգով վերանորոգում իրականացնելու և գույքի ձեռքբերման նպատակով տրամադրել 4.600.000 (չորս միլիոն վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ԱՄԱՆՈՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏՈՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի բաժնի պետ Ա. Հովհաննիսյանին:

Ա.Հովհաննիսյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ամանորի կապակցությամբ Գյումրի քաղաքում լավագույն տոնական զարդարված թվով 4 (չորս) տարածքների՝ բնակելի, բակային, ուսումնական և առևտրի ու սպասարկման, շնորհել դրամական մրցանակներ՝ յուրաքանչյուրին 50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4727) «Կրթական, մշակութային և սպորտային նպաստ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0

ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. «ԱՄԱՆՈՐԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի բաժնի պետ Ա.Հովհաննիսյանին:

Ա.Հովհաննիսյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. «Ամանորը Գյումրիում» խորագրով լուսանկարչական մրցույթ անցկացնելու համար սահմանել թվով 3 (երեք) դրամական մրցանակներ՝ առաջին տեղ՝ 50.000 (հիսուն հազար), երկրորդ տեղ՝ 40.000 (քառասուն հազար) և երրորդ տեղ՝ 30.000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 120.000 (հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4727) «Կրթական, մշակութային և սպորտային նպաստ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՐԱԶԻ (ԳՈՐԿՈՒ) ՓՈՂՈՑԻ N 30 ՀԱՍՑԵԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ «ԳՅՈՒՄՐՈՒ ԸՆԿԵՐՆԵՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ. Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի վկայական 2020825) Շիրազի (Գորկու) փողոց N 30 հասցեի պատմության և մշակույթի հուշարձան հանդիսացող 434,02 (չորս հարյուր երեսունչորս ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հասարակական շինությունը և շինության

պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 0,035028(զրո ամբողջ երեսունհինգ հազար քսանութ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը 30 (երեսուն) տարի ժամկետով անհատույց (մշտական) օգտագործման տրամադրել «Գյումրու ընկերներ» մշակութային հիմնադրամին՝ շենքը ամրակայելու, վերականգնելու և մշակութային նպատակներով օգտագործելու համար:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված պատմական և մշակութային արժեք ունեցող հասարակական շինությունը ամրակայել, վերականգնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի № 438 որոշմամբ հաստատված «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերանորոգման, վերականգնման և օգտագործման» կարգի համաձայն:
3. Հանձնարարել Գյումրի համայնքի «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ «Գյումրու ընկերներ» մշակութային հիմնադրամի հետ կնքել հուշարձանի պահպանական պարտավորագիր և պարտավորագրի մեկ օրինակը ներկայացնել լիազոր մարմնին:
4. Օրենքով սահմանված կարգով «Գյումրու ընկերներ» մշակութային հիմնադրամի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված ամշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ. Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերն աճուրդային կարգով օտարելու նպատակով սահմանված մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ. Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել Գյումրի համայնքի կարիքների համար օգտագործելու նպատակով առուվաճառքի միջոցով քաղաքացի Քնարիկ Մելիքյանից ձեռք բերել սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոցի N 133 հասցեի մշակույթի կենտրոնի երկու շինությունները (սեփականության իրավունքի վկայականներ՝ N 1125275 և N 112274):
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի ձեռքբերման համար Գյումրի համայնքի բյուջեից հատկացնել 33.340.000 (երեսուներեք միլիոն երեք հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 1/1/1 գործառական դասակարգման (5111) «Շենք-շինությունների ձեռքբերում» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:
4. Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացումն ու պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 15
դեմ – 1 (Լ.Բարսեղյան)
ձեռնպահ – 1 (Ա. Բադեյան)

Որոշումը չընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՎԱՐՁԱԿԱԼԵԼՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի N 99-Ա ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 153-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ. Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Տալ համաձայնություն վարձակալելու Գյումրի քաղաքի Իսահակյան փողոց N 6/3 հասցեի, «Գյումրու մարզամշակութային կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը

սեփականության իրավունքով պատկանող շինությունը (անշարժ գույքի նկատման իրավունքների պետական գրանցման վկայական N 13062013-08-0033):

2.Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի վարձակալության վարձավճարի չափ սահմանել տարեկան 3 200 000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ ապահովելու սույն որոշման 2-րդ կետում սահմանված վարձավճարի վճարումը:

4.Սահմանել, որ՝

1) վարձակալած գույքի օգտագործման պայմաններն ու պահանջները կարգավորվում են վարձակալության պայմանագրերով.
2) վարձակալած տարածքում իրենց գործունեությունն են իրականացնելու համայնքային ենթակայության Յուրի Վարդանյանի անվան ծանրամարտի մարզադպրոցը, «Գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության Հովհաննես Հովհաննիսյանի անվան գրադարանը և քաղաքապետարանի փողային նվագախումբը:
3) Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ավագանու 2010 թվականի մայիսի 25-ի «Գյումրու քաղաքապետարանի «Յուրի Վարդանյանի» անվան ծանրամարտի մարզադպրոցին գումար հատկացնելու մասին» N 99-Ա և 2010 թվականի սեպտեմբերի 2-ի «Գյումրու քաղաքապետարանի ենթակայության «Գրադարանների կենտրոնացված համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը շինության վարձակալության համար գումար հատկացնելու մասին» N 153-Ա որոշումները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԿԻՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏԻ ՇԵՆՔԸ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի (կայարանամերձ հրապարակի) հարևանությամբ գտնվող, և որևէ տնօրինություն չունեցող, վթարային վիճակում գտնվող նախկին Երկաթուղայինների մշակույթի պալատի շենքը համարել Գյումրի համայնքի սեփականություն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 157-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Թումանյան փողոց № 15 հասցեում գտնվող զինվորական կոմիսարիատի շենքը և դրա կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասը Գյումրի քաղաքի զինվորական կոմիսարիատին անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին» N 157-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) վերնագրում, որոշման 1-ին կետում «Գյումրի քաղաքի զինվորական կոմիսարիատին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը» բառերով,

2) որոշման նախաբանի 2-րդ պարբերության «իրավունքով» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը» բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 12-ի «Աճուրդով օտարելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող առանձնացված հողամասերի աճուրդի մեկնարկային գներ և պայմաններ հաստատելու մասին» N 73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման հավելվածի 5-րդ տողի 6-րդ սյունակի «370 000» թիվը փոխարինել «260 000» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՐՁԱՆԸ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Լևոն Բարսեղյան. «Հաշվի առնելով, որ Գյումրի համայնքի բնակիչների մեծ մասը ապրում են սոցիալապես ծանր վիճակում, ունեն դրամական օգնության, վառելափայտի ձեռքբերման, կոմունալ ծառայությունների համար վճարումներ կատարելու խնդիրներ՝ առաջարկում են դեմ քվեարկել»:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի քաղաքում Սայաթ-Նովայի արձանի տեղադրման համար Գյումրի համայնքի բյուջեից հատկացնել դրամական միջոցներ՝ 7.000.000 (յոթ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 15
դեմ – 1 (Լ. Բարսեղյան)
ձեռնպահ – 1 (Ե. Պողոսյան)
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Որպես նվիրաբերություն ընդունել Գյումրի քաղաքի վարչական տարածքում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող գույքը՝ համաձայն NN 1-2 հավելվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0

ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 161-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի 2-րդ, 3-րդ և 6-րդ հատվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն համապատասխանաբար NN 1-3 հավելվածների:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին կատարել համապատասխան փոփոխությունները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Թույլատրել ֆինանսատնտեսագիտական բաժնին.
1)համայնքի հաշվեկշիռ մուտքագրել Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հիմնական միջոցները՝ համաձայն N 1 հավելվածի,
2)համայնքի հաշվեկշռից դուրս գրելու օտարված, նվիրատվությամբ տրված հիմնական միջոցները՝ համաձայն N2 հավելվածի:
2. Հաստատել Գյումրի համայնքի հաշվեկշռում գտնվող, սակայն ուսումնասիրությունների արդյունքում չպարզված հիմնական միջոցների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:
3. Գյումրի համայնքի հաշվեկշռում գտնվող չպարզված հիմնական միջոցների հետագա կարգավիճակը պարզելու նպատակով հանձնարարել քաղաքապետարանի համապատասխան բաժիններին կազմակերպել և իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ և արդյունքները ներկայացնել ավագանու քննարկմանը և հաստատմանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17

դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N144-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2014 թվականի նոյեմբերի 14-ի <<Սոցիալապես անապահով ընտանիքներին վառելափայտ ձեռք բերելու համար դրամական օգնություն տրամադրելու մասին>> N 144-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետի 3-րդ տողի <<(4729)>> թիվը փոխարինել <<(4819)>> թվով,
2) որոշման 2-րդ կետի 3-րդ տողի <<Այլ նպաստներ>> բառերը փոխարինել <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

22. <<ԱՐՄԻՆԵ>> ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. <<Արմինե >> կրթամշակութային հասարակական կազմակերպությանը ամեն ամիս (2015 թվականի հունվարից մինչև 2015 թվականի դեկտեմբերը ներառյալ) հատկացնել 20 000-ական դրամ:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

23. <<ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ>> ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. <<Հայկական Կարիտաս>> բարեսիրական հասարակական կազմակերպությանը հատկացնել 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ նվիրատվություն՝ ձմռան ընթացքում թվով 400 կարիքավոր ծերերի (յուրաքանչյուրին 3000 (երեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով համաֆինանսավորման միջոցով) ջեռուցման կարիքները հոգալու նպատակով:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԲԵՐ ԹԱՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել 2 000 000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ Գյումրի համայնքի տարբեր թաղամասերում թվով 46 (քառասունվեց) հատ տոնածառերի ձեռք բերման և զարդարման նպատակով:
2. Թույլատրել գնումները իրականացնել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների վերաբերյալ մրցույթի անցկացման:
3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) << Այլ ծախսեր >> տնտեսագիտական դասակարգման հոդվածից :

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

25. ԱՄԱՆՈՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Արցախյան պատերազմի սոցիալապես անապահով թվով 16 (տասնվեց) ազատամարտիկներին կանխիկ տրամադրել 240.000 (երկու հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

26. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 139 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԻՆԸ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 139 (մեկ հարյուր երեսունինը) անձանց կանխիկ տրամադրել 1 465 000 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0

ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

27. ՀԱՄԼԵՏ ՏՈՆՈՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սոցիալապես անապահով Համլետ Տոնոյանին կանխիկ տրամադրել 300.000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 170-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ա որոշման 1-ին կետով հաստատված Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

29. ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ՍՈՒՐԲ ՅՈԹ ՎԵՐՔ ԵԿԵՂԵՑՈՒ <<ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՋՈԿԱՏԻՆ>> ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Շիրակի թեմի Սուրբ Յոթ Վերք եկեղեցու <<Բարեգործական ջոկատին>> հատկացնել 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից, փոխանցումը կատարել 2380018006510900 հաշվեհամարին (ՀՎՀՀ 05503942) <<Շիրակի թեմի առաջնորդարան >> Հայ առաքելական եկեղեցի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԵՐԵՐԻ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏՈՒՄ, ՄԱՆԿԱՏՆԵՐՈՒՄ, ՀԱՏՈՒԿ ԽՆԱՄՔԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐԻ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել 5.000.000 (հինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Գյումրի համայնքի ծերերի տուն-ինտերնատում, մանկատներում, հատուկ խնամքի կարիք ունեցող անձանց կենտրոններում ամանորյա նվերների,միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4861) <<Այլ ծախսեր>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17

դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ <<ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄԱԴՐԱՄԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության <<Աջակցություն Շիրակի մարզի համայնքներին>> բարեգործական հիմնադրամին Շիրակի մարզի Գյումրի համայնքում սոցիալական ծրագրերի իրականացման համար հատկացնել 10.000.000 (տաս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանին:

Մ.Ղազարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային ենթակայության <<Հունա-հռոմեական ըմբշամարտի մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը մարզադպրոցի կապիտալ վերանորոգումից հետո վերանվանել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Արթուր Ալեքսանյանի անվան Հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Լ. Բարսեղյան.« Ես հրաժարվում եմ մասնակցել այս որոշման ընդունման քվեարկությանը»:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հաստատել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի, ծախսերի և եկամուտների հետևյալ հաշվեկշռվածությամբ՝

1) **եկամուտներ՝ 3 124 729.4 (երեք միլիարդ մեկ հարյուր քսանչորս միլիոն յոթ հարյուր քսանինը հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,**
2) **ծախսեր՝ 3 124 729.4 (երեք միլիարդ մեկ հարյուր քսանչորս միլիոն յոթ հարյուր քսանինը հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:**

2. Բյուջեի կատարումն ապահովելու նպատակով՝

1) որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, սահմանել համայնքի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատել համայնքային ենթակայության կազմակերպությունների պահպանման ծախսերի նախահաշիվները,

2) տարեկան բյուջեի և եռամսյակային բաշխմամբ հաստատված նախահաշիվները տրամադրել համայնքի բյուջեի կատարման սպասարկումն իրականացնող պետական լիազորված մարմնի համապատասխան տեղական գանձապետական բաժանմունքին:

3. Անհրաժեշտության դեպքում 2015 թվականի բյուջեով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 15%-ի սահմաններում կատարել վերաբաշխում սույն որոշումով հաստատված ծախսերի գործառական դասակարգման առանձին խմբերի և ենթախմբերի, ինչպես նաև ենթախմբերի ներսում, այն պայմանով, որ թույլ չտրվի սույն որոշմամբ յուրաքանչյուր ենթախմբի գծով նախատեսված հատկացումների կրճատում ոչ ավել, քան 20%-ի չափով կամ ավելացում 35%-ից ավելի չափով:

4. Թույլատրել համայնքի ղեկավարին կատարել բյուջեն հաստատելու մասին՝ համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ: Կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել սույն որոշմամբ սահմանված չափաքանակները:

5. Եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին ներկայացնել հաղորդումներ համայնքի ավագանուն:

6. Բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնել մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:

7. Բյուջեի հաստատման մասին ավագանու որոշումը եռօրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց